«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

02. 02. 15թ. N: Հեղ/1-03/123
Ձեր N:

ՀՐԱՎԵՐ

"Հայջրմուղկոյուղի"ՓԲԸ-ի Հեղուկ քլորի ձեռքբերման
N «ՀՀԳՆՋՏԴԿ-ՀՋԿԸ-ԾՀԱՊՁԲ-11/15-15/01/2»

Հարգելի մասնակիցներ

ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված հեղուկ քլորի ձեռքբերումը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում *«ՀՀԳՆՋՏԴԿ-ՀՋԿԸ-ԾՀԱՊՁԲ-11/15-15/01/2»*:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով, մինչև *2015թ. փետրվարի* 13-ը *ժամը՝ 15:00-ն:* Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Հայկ Հովհաննիսյանը:* Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեում, 2015թ. *փետրվարի* 13-*ին, ժամը՝ 15:00-ին:*

Գնման առարկա է հանդիսանում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար հեղուկ քլորի ձեռքբերումը*:*

"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի կարիքների համար հեղուկ քլորի ձեռքբերումը *և* (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N5)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N6):* Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք գնման առարկայի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am: Հեռ՝ (055) 55-78-35:

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ

Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրեն՝ ***Ա. Մարտիրոսյան***

Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8ա
Head Office
8A Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

1-71
info@armwater.am

« ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2» ծածկագրով
հրավերի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հեղուկ քլորի ձեռքբերման
N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»

ք. Երևան «__» « ». 2015թ.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Պ. Լորենի, որը գործում է որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և _____-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մատակարարել մինչև 20.0 (քսան) տոննա հեղուկ քլոր, (այսուհետև՝ ապրանք)՝ և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով Կատարողը պետք է հնարավորություն ունենա և կարողանա իրականացնելու Պատվիրատուի տարաների (Կոնտեյներների և բալոնների) վնասազերծման, վերանորոգման (կափույրի փոխարինման), հաստաչափման, ավազաշիթահարման և ներկման գործառույթները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ապրանքը մատակարարվում է Պատվիրատուի կողմից տրամադրված տարաներով՝ կոնտեյներներով և բալոններով, որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական տվյալներին: Մատակարարը Պատվիրատուի ներկայացուցչի հետ զննում է տարաները և թերության առկայության դեպքում կազմվում է համատեղ Թերությունների ԱԿՏ:

1.3 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված տարաները պետք է մաքրված լինեն ժանգից և ներկված լինեն համապատասխան գույնով՝

- Բալոնը կանաչ
- Կոնտեյները՝ արծաթագույն, եզրերին երկու կանաչ գծերով:

Տարայի վրա պետք է նշված լինի պատկանելիությունը, կապարակնքման տեղը անձնագրային տվյալները, պետք է ապահովվի տվյալների տեսանելիությունը՝ ծածկված անգույն լաքով և վերցված սպիտակ շրջանակի մեջ:

1.4 Ապրանքը մատակարարվում է N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան:

1.5 հաշվի առնելով Պատվիրատուի գործունեության առանձնահատկությունները՝ վթարներ, անհետաձգելի դեպքեր, ֆինանսական միջոցների ոչ բավարար մուտքեր և այլն, որոնք հնարավոր չէ կանխավ նախատեսել, անհրաժեշտ ապրանքի գնումը և մատակարարումն իրականացվում է միայն Պատվիրատուի ներկայացրած ծավալով, պահանջարկից հետո եռօրյա ժամկետում տեխնիկական բնութագրին համապատասխան, հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա և Պատվիրատուն որևէ պարտավորություն չի կրում N 2 հավելվածի ամբողջ ծավալը չգնելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատակարարվող ապրանքի որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանք:

ա) Չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել ոչ պատշաճ որակի ապրանք սույն պայմանագրին համապատասխանող ապրանքը անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարված ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է մատակարարված ապրանքի ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատակարարված ապրանքը, թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը.

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ապրանքի մատակարարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Ապրանքի պահանջվող խմբաքանակը Պատվիրատուին հանձնել հայտը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կազմելով հանձնման ընդունման արձանագրություն:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Պատվիրատուին հանձնել սույն պայմանագրին համապատասխան որակի Ապրանք՝ Պատվիրատուի համար ընդունելի պայմաններով:

2.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.6 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ապրանքի հանձնում-ընդունումը կատարվում է Կատարողի տարածքում (էլ. Կշեռքի միջոցով):

3.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ, որտեղ պետք է արտացոլվի յուրաքանչյուր տարայի համարը, դատարկ քաշը և լիցքավորված քաշը:

3.3 Կատարողը ապրանքի մատակարարման ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատակարարված ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.4 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.5 Պատվիրատուն Արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.6 Տարաների բեռնաթափման, լիցքավորման և բարձման աշխատանքները Կատարողը կատարում է իր տարածքում՝ իր միջոցներով և ուժերով: Պատվիրատուն Կատարողի տարածքից ապրանքի փոխադրումը կատարում է իր ուժերով և միջոցներով:

3.7 Ապրանքի սեփականության իրավունքը Կատարողից անցնում է Պատվիրատուին՝ սույն պայմանագրի 3.1, 3.2 և 3.3 կետերում նշված գործողությունների ավարտից հետո:

3.8 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված հանձնման- ընդունման արձանագրությունները ստորագրում է Պատվիրատուի աշխատակից Էդվարդ Սիմոնյանը: Նշված անձի փոփոխության դեպում Պատվիրատուն գրավոր տեղեկացնում է Կատարողին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մեկ տոննայի գինը՝ կազմում է ---- (--------) ՀՀ դրամ, իսկ պայմանագրի առավելագույն գինը կազմում է ---- (--------) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Մատուցված ապրանքի գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Ապրանքի որակը՝

5.1. Կատարողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանելիությունը սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին և հաստատում է, որ մատակարարվելիք Ապրանքը նախատեսված է խմելու ջրի վարակազերծման և ախտահանման համար:

5.2 Կատարողը պարտավորվում է մատակարարվելիք Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի հետ ներկայացնել ՀՀ համապատասխան մարմնի կողմից տրված սերտիֆիկատ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարված ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4 Սույն պայմանագիրը ստորագրելուհետ միասին Կատարողը պարտավորվում է լրացնել և հաստատել սույն պայմանագրի N 7 հավելվածով սահմանված տուժանքի մասին համաձայնությունը:

6.5 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ապրանքը մատակարարվելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

6.6 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.7 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Սույն պայմանագիրը ստորագրելու հետ միասին Կատարողը պարտավորվում է լրացնել և հաստատել սույն պայմանագրի N 5 հավելվածով սահմանված տուժանքի մասին համաձայնությունը:

6.9 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն

պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Այն դեպքում, երբ <Գնումների մասին> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

8.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է ..... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 և N5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	_____
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակ.8	Հասցե՝ _____
"ՎՏԲ Հայաստան Բանկ" ՓԲԸ	ՀՎՀՀ՝ _____
ՀՎՀՀ՝ 02509667	Հ/Հ՝ _____
Հ/Հ՝ 160485054425	
Գլխավոր տնօրեն՝ Պ.Լորեն	Տնօրեն՝ _____
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
« » « », 2015թ. կնքված
N « ՀՀԳՆԶՏՊԿ-ՀԶԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ *

Գնման առարկայի անվանումը՝ Հեղուք քլոր (CL_2)

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Կատարողը պարտավոր է մատակարարել խմելու ջրի ախտահանման և վարակազերծման համար նախատեսված հեղուկ քլոր (CL2) 99.6% ակտիվությամբ,ամսական 4.5-5 տոննա քանակությամբ:

Հեղուկ քլորը պետք է լիցքավորվի հատուկ տարաների մեջ (կոնտեյներ և բալոն), որը տրամադրելու է Պատվիրատուն:

Կատարողը պարտավոր է մատակարարվելիք Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի հետ ներկայացնել ապրանքի ծագման և որակի սերտիֆիկատ:

Կատարողը պետք է երաշխավորի Ապրանքի որակի համապատասխանելիությունը պետ ստանդարտներին (ГОСТ 6718-93 /ИСО 2120-72, ИСО 2121-72/) և հաստատի, որ մատակարարվող Ապրանքը նախատեսված է խմելու ջրի վարակազերծման և ախտահանման համար:

Կատարողը պետք է ունենա հեղուկ քլորի մատակարարման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը և պատասխանատվություն կրի տեխնիկական կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխան հեղուկ քլորի կոնտեյներների և բալոնների լիցքավորման համար:

Կատարողը, մինչև հեղուկ քլորի լիցքավորում կատարելը, պարտավոր է Պատվիրատուի ներկայացուցչի անմիջական մասնակցությամբ յուրաքանչյուր անգամ զննել տարաները և դրանցում թերությունների առկայության դեպքում համատեղ կազմել համապատասխան թերությունների ակտ(եր): Անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի պահանջով Կատարողը պետք է հնարավորություն ունենա և կարողանա իրականացնելու Պատվիրատուի տարաների (Կոնտեյներների և բալոնների) վնասազերծման, վերանորոգման (կափույրի փոխարինման), հաստաչափման, ավազաշիթահարման և ներկման գործառույթները, որի վերաբերյալ Կողմերը հետագայում լրացուցիչ կբանակցեն և կապահովեն անհրաժեշտ փաստաթղթավորումը:

*** Սույն բնութագրիչներին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:**

Հավելված 2
« » « », 2015թ. կնքված
N « ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»
պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

N ը/Կ	ԱՊՐԱՆՔԻ			Նախեսվում է գնել 2015թ.									
	Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը 2015թ.	
				քան.	գին	քան.	գին	քան.	գին	քան	գին	քան.	գին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Հեղուկ Քլոր	Տոննա		8		12						20	

*- Ծանոթություն

Հեղուկ քլորի մատակարարումը նախատեսվում է յուրաքանչյուր ամիս՝ ամսական 4.5-5 տոննա քանակությամբ՝ ըստ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող հայտի:

Հավելված 3
« » « », 2015թ. կնքված
N « ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»

պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N ը/կ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ	Չափի միավորը	2015թ. հունվար-դեկտեմբեր									
	Անվանումը		հունվար	...	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	...	դեկտեմբեր	Ընդամենը 2015թ.
1	Հեղուկ Քլոր	տոննա			20%	40%	60%	80%	100 %			100 %

Հավելված 4
« » « », 2015թ. կնքված
N « ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»
գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
ՀՀ_____	ՀՀ_____
_____	_____
ՀՎՀՀ_____	ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 20___թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____»:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___ե _____ 20___թ

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս _____ և Կատարողը, ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները (այսուհետև՝ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» _____ 20___թ.-ից «___» _____ 20___թ. ընկած ժամանակահատվածում մատակարել ապրանքը

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Մաքսակարարված ապրանքների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
(Ազգանուն, Անուն)	(Ազգանուն, Անուն)
ԿՏ	ԿՏ

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5
«ՀՀԳՆԶՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2 »ծածկագրով
Շ/Հ ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ <<----/--->>

ք. Երևան <<____>>_____ 2015 թ.

<<Մասնակցի անվանումը>>-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ <<Պատվիրատու>>) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման <<------/--->> ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 <<Պատվիրատու>>-ի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման <<---Շ<---/--->> ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և բաց ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ..... (.....տասներով.....) ՀՀ դրամի չափով:

1.1.2 <<Պատվիրատու>>-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում <<Պատվիրատու>>-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>> բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը>>-ն հանձնարարում է <<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>> բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի նավանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց <<Պատվիրատուի անվանումը>>-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Հավելված 6

N « ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»

գնման պայմանագրի ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հրավերի

«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»*ծածկագրով*
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովին

Դ Ի Մ Ո Ւ Մ
Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին
մ ա ս ն ա կ ց ե լ ու

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

«Պատվիրատուի անվանումը»-ի կողմից ***«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2»***: ծածկագրով հայտարարված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ «Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե»:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 7
«ՀՀԳՆԶՏՊԿ-ՀԶԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2» գնման պայմանագրի ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հրավերի

«ՀՀԳՆԶՏՊԿ-ՀԶԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «-.....-» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
10	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N10>>			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը ներառում է ինքնարժեքը և շահույթը:
*****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«____» _____ 2015թ.